



ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՐՈՒԹԻՒՆ

Տ. ՊԵՏՐՈՍ ԱՐԳԵՊԻՍԿԱՊՈՍ

ԱՌԱՋՆՈՐԻՒՆ ՍԵՐԱՍՏԻՈՅ

Սեբաստիոյ Առաջնորդ Տ. Պետրոս Արքեպիսկոպոս վախճանեց է Չառիի Կիրակի առաւօտուն: Հանդուցեալը 91 տարեկան էր և բնիկ Սեբաստացի: Տեղւոյն Ս. Նշան վանքին միաբաններէն էր և քառասուն տարեկէ ի վեր կը վարէր այդ առաջնորդական պաշտօնը:

Երեքշաբթի օր՝ Ապրիլի 24-ին ժամը 4-ին, Սեբաստիոյ Մայր եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ Սեբաստիոյ Տ. Ս. Պետրոս Արքեպիսկոպոսի յուղարկաւորութեան հանգէտը: Քաղաքին բոլոր եկեղեցիներուն և վանքերուն զանգակները ընդհատ ընդհատ կը հնչէին առտուն կանուխէն, և բոլոր Հայ վաճառականներն ու խանութպանները իրենց վաճառատունները փակած, եկած հաւաքուած էին Առաջնորդին շուրջ, որ շրջապատուած էր երեսունհինգ քահանաներէ և վարդապետներէ, իրենց գլուխ ունենալով Շապին Գարահիսարի առաջնորդ Տ. Սմբատ Ժ. վրդ. Սատտէթեան: Պատարագի միջոցին, կատարուեցաւ օծման հանգէտը, ուրկէ վերջ կազմուեցաւ յուղարկաւորութեան թափօրը: Առջևէն կերթային ոստիկաններ, ոստիկան զինուորներ, թաղապետական չափուշներ, բարապաններ, որբանոցի ուսուցչական խումբը և որբեր, քաղաքամիջի վարժարաններու ուսուցիչներ և աշակերտներ, որոնց կը հետեւէր դպրաց և եկեղեցականաց խումբը նախադասութեամբ հանդիսադիր վարդապետին: Թափօրին առջև կը տարուէր նաև վեց ծաղկեպսակ: Նոյնպէս թափօրին մէջտեղէն կընթանային Տ. Վահան քհն. Գարաեան, Առաջնորդին արծաթապատ ասան բռնած, և Տիգրան էֆ. Թաւշեայ բարձիկի մը վրայ կը կրէր հանդուցեալին Ս. կարգի Մէճիւտէի և Բ. կարգի Օսմանիէ պատուանշաններն և եպիսկոպոսական պնակէն: Առաջնորդին դադաղը, եկեղեցիին շորս

կողմերը շրջագայեցուցին և կանոնական Աւետարանները կարգալէ յետոյ՝ ճամբայ ելաւ Թափօրը, որուն կը հետեւէին պետական պաշտօնատարներ, Հայ երեւելիներ և ժողովրդեան խուռն բաղմու թիւն մը։ Դագաղը Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից ոտիկանական պաշտօնատան առջև վար դրուելով, կրթ. տեսչութեան արեւակալ Դրիգոր Էֆէնտիի կողմէ դամբանական մը արտասանուեցաւ, որով կը թուէր հանդուցեալին իբր Առաջնորդ մատուցած ծառայութիւնները։ Թափօրը նոյն հանգիստւորութեամբ ճամբայ ելաւ և Մէյտանլըք փողոցի կառավարական պաշտօնատան առջևէն անցնելով, հոն դարձեալ կանգ առաւ, ուր հայ բողոքական պատուելիներու կողմէ դամբանականներ և մեռելական աղօթքներ կարգացուեցան։ Յետոյ անցաւ Թուրք աղջկանց վարժարանին առջևէն մինչև հրապարակը, ուր կարգաւ շարուած էին ի պատիւ հանդուցելոյն Կայս. ղինուորներ, Կայս. նուադածուած խումբը և Կեզր. հրամանատարը։ Թափօրը Պէզիրճի Թարլասը փողոցէն անցած ատեն, հոն գտնուած, ֆրանս., ամերիկեան և իտալական հիւպատոսարաններ ի նշան սգոյ կէս դրոշակ պարզեցին։ Յետոյ հանդուցեալին մարմինը տարուեցաւ Ս. Նշան վանքը, ուր մարմինը ամփոփուեցաւ Անանեան Սրբազանի շիրմին քով։

«Լոյս» կրօնական շաբաթաթերթ.

